ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025թ. թիվ 530-Ա

Ս.ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ 2024-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ԵՎ 2025-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1392-Ն որոշման թիվ 3 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության» 60-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 886-Ա որոշումը և հաշվի առնելով Ս.Աղաջանյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Սերգեյ Աղաջանյանին տրամադրել 2024-2025թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մնացած մասը՝ 15 աշխատանքային օր և 2025-2026թթ. աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մի մասը՝ 6 աշխատանքային օր՝ ս/թ սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ:

2. Ս.Աղաջանյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը դնել «ՀՀ Լոռու մարզի Դաշտադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Սոֆիկ Մարգարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 12
ք.Վանաձոր